# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 31 | Հուլիս | 2019 թ. |

| [4] Առաքման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 31 | Հուլիս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 1832273377 |

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր

| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

**Արտադրանք, ապրանք առաքող անձի**

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 | |
| [9] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [10] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ | N 1570015001210100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | |

**Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի**

| | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [16] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [18] Լրացուցիչ տվյալներ | | |
| [19] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր: Համար | |
| | Լիազորագիր: Ամսաթիվ | |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55158819 ք/գ, | հատ | 1 | 39400 | 39400 |
| Ընդամենը | | | | | 39400 |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

31/07/2019 11:17:42

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

08 հուլիսի 2019 թ.

ք.Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ա.Ս.Մնացականյանս, վերանայելով վարույթիս թիվ 55158819 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի հունիսի 12-ին Անուշ Բեժանյանը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 20-ի սահմաններում, Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 3/12-2 հասցեի իրենց տանը որդին՝ Սարիկ Սանդրոյի Ուլուխանյանն անհիմն վիճաբանել է իր հետ, որի ընթացքում ոտքերով դիտավորությամբ հարվածներ է հասցրել մարմնի տարբեր մասերին և պատճառել մարմնական վնասվածքներ:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0020/հ եզրակացության՝ Անուշ Բեժանյանի մարմնական վնասվածքը՝ ձախ ազդոսկրի փակ, միջտամբիոնային կոտրվածքը հասցվել է բութ, կոշտ առարկայով /ներով/, հնարավոր է գործի հանգամանքներում նշված ժամկետում և պայմաններում, որն առաջացրել է առողջությանը ծանր վնաս:

Դեպքի առթիվ 21.06.2019 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 55158819 քրեական գործը և նույն օրը նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

2019 թվականի հունիսի 25-ին քրեական գործը Թումանյանի քննչական բաժնում ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

2019 թվականի հուլիսի 7-ին որոշում է կայացվել Սարիկ Ուլուխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ այն բանի համար, որ նա 2019 թվականի հունիսի 12-ին՝ ժամը 20-ի սահմաններում, իր բնակության՝ Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 3/12 շենքի 2-րդ հասցեի բնակարանում, մորից՝ 1949 թվականի փետրվարի 11-ին ծնված Անուշ Բեժանյանից, 30.000 ՀՀ դրամ գումար պահանջելուց և մերժում ստանալուց հետո, վիճաբանել է վերջինիս հետ, որի ընթացքում Սարիկ Ուլուխանյանն Անուշ Բեժանյանին մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ հրել, գցել է հատակին, ապա ոտքերով դիտավորությամբ հարվածներ հասցրել ձախ ազդրային շրջանին՝ պատճառելով առողջության ծանր վնաս՝ ձախ ազդոսկրի փակ, միջտամբիոնային կոտրվածք:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Սարիկ Ուլուխանյանը տառապել է «էպիլեպսիա, անձի բնութագրական փոփոխություններով» հոգեկան հիվանդությամբ:

08.07.2019 թվականին «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ ընկերության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Սարիկ Ուլուխանյանը ֆիզիկապես վատառողջ է. ախտորոշումը՝ «Անձի օրգանական խանգարում» հոգեկան հիվանդություն:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Սարիկ Ուլուխանյանի հոգեկան վիճակի, նրա մոտ հոգեկան հիվանդության առկայության, մեղսունակության հարցը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244 և 248 հոդվածների պահանջներով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Սույն գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:
2. Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը, իսկ քրեական գործի նյութերը և Սարիկ Ուլուխանյանը կներկայացվեն փորձաքննության անցկացման օրը:
3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Սարիկ Ուլուխանյանը քրոնիկ հոգեկան կամ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո ապա ինչպիսի:

բ/ Եթե Սարիկ Ուլուխանյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ ունեցել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, ապա վերոհիշյալ դեպքի կատարման պահին դրանք զրկել են նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակություններից, թե ոչ:

գ/ Վերոհիշյալ դեպքի կատարման պահին Սարիկ Ուլուխանյանն ունեցել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, թե ոչ:

դ/ Վերոհիշյալ դեպքի կատարման պահին Սարիկ Ուլուխանյանը եղել է արդյոք մեղսունակ, թե ոչ, նա հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ:

ե/ Կարելի է արդյոք արժանահավատ համարել Սարիկ Ուլուխանյանի կողմից տրված ցուցմունքները:

զ/ Իր հոգեկան վիճակով պայմանավորված՝ Սարիկ Ուլուխանյանն ի վիճակի է մասնակցել դատաքննչական գործողությունների, թե ոչ:

է/ Սարիկ Ուլուխանյանն իր հոգեկան վիճակից ելնելով՝ իր կամ շրջապատի համար վտանգ ներկայացնում է, թե ոչ:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության փաստերի ապահովման համար:

4. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ,**
**արդարադատության երրորդ դասի խորհրդական՝** Ա.Մնացականյան